ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 32 (452) «26» նոյեմբերի 2021թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | |
|---|---|---|
| | ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ | |
| | ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ | |
| $637^{1}$ | «Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 23-ի N 1271-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1284-Ն որոշումը…… | 2 |

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

26 նոյեմբերի 2021թ. N 1284-Ն

ք. Ստեփանակերտ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N1271-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 23-ի «Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 12-ի N1096-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1271-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. 2021 թվականի նոյեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 4-ը ներառյալ Ստեփանակերտ քաղաքում գործող բոլոր ուսումնական հաստատությունների միջնակարգ կրթության 1-ին աստիճանի ուսուցումն անցկացնել առկա ուսուցմամբ և հերթափոխով՝ յուրաքանչյուր հերթափոխում 15 աշակերտ, իսկ 2-րդ և 3-րդ աստիճանների ուսուցումն անցկացնել հեռավար՝ բացառությամբ ավարտական դասարանների։ Արտադպրոցական դաստիարակություն իրականացնող հաստատությունների պարապմունքները կազմակերպել անհատական եղանակով՝ բացառելով խմբային պարապմունքները։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց անմիջապես հետո։

**«Հաստատում եմ»**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ